Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 3

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25 հոկտեմբերի 2013թ. ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության մասնագետ Հովհաննես Օհանյանը, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի, համահարթեցման դոտացիաների և պետռեգիստրում առկա տվյալների ու մարզի համայնքների բնակչության փաստացի թվաքանակի համադրելիության խնդրի մասին

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Թ. Ղազարյան/

2. Մարզի առողջապահության բնագավառում իրականացված աշխատանքների, առկա ծրագրերի և խնդիրների մասին

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա. Ծատրյան/

3. ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի "ՀՀ մարզերում պետական կառավարման մասին" ՆՀ-728 հրամանագրում և ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների մասին

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանով/

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ոլորտում իրականացված աշխատանքների և առկա խնդիրների մասին

/Զեկուցող՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի ,,Սյունիք,, տարածքային ստորաբաժանման ղեկավար Գ. Աղախանյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի, համահարթեցման դոտացիաների և պետռեգիստրում առկա տվյալների ու մարզի համայնքների բնակչության փաստացի թվաքանակի

համադրելիության խնդրի մասին» զեկուցումով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Թադևոս Ղազարյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Մարզի առողջապահության բնագավառում իրականացված աշխատանքների, առկա ծրագրերի և խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Աշոտ Ծատրյանը:

Օրակարգի երրորդ՝ «ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի "ՀՀ մարզերում պետական կառավարման մասին" ՆՀ-728 հրամանագրում և ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կառլեն Կոզմանովը:

Օրակարգի չորրորդ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ոլորտում իրականացված աշխատանքների և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի ,,Սյունիք,, տարածքային ստորաբաժանման ղեկավար Գագիկ Աղախանյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ՝ համայնքերում առկա խնդիրների մասին ելույթներով և հարցադրումներով հանդես եկան Տեղի, Ույծի, Տաթևի, Լեհվազի, Շաքիի, Ծավի, Ն. Խնձորեսկի համայնքների ղեկավարները: Բարձրացված հարցադրումներին տրվեցին պարզաբանումներ զեկուցողների և մարզպետի կողմից:

Հանձնարարվեց աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝

- համայնքների բյուջեների պլանավորման ժամանակ ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն՝ հնարավոր շեղումները բացառելու նպատակով.
- ուսումնասիրել և վերլուծել առանձին համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքում տեղ գտած թերացումների պատճառները և ձեռնարկել միջոցներ դրանց շտկման ուղղությամբ.
- ձեռնարկել միջոցներ համայնքների ավագանիների նիստերին քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների մասնակցության օրինակելի կարգ մշակելու ուղղությամբ.
- համայնքների ղեկավարների, անշարժ գույքի պետական կոմիտեի ,,Սյունիք,, տարածքային ստորաբաժանման հետ ձեռնարկել միջոցներ անշարժ գույքի վկայականների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ **Վ. Հակոբյան**

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55